



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

*17 հոկտեմբերի 2011 թվականի  
թիվ 474-Ա, քաղաք Երևան*

**«ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ  
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի հոկտեմբերի 17-ի դռնբաց նիստում քննարկեց «Գավառտրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ հարցը:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Համաձայն «Թերթ.am» կայքի՝ 2011 թվականի օգոստոսի 23-ի «Երկիր. Գերշահույթ՝ ուղևորների հաշվին» հրապարակման (այսուհետ՝ Հրապարակում)՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն) կողմից հայտարարված՝ լիցենզիաների տրամադրման մրցույթում առավելությունը տրվում է ուղևորափոխադրման համար նվազագույն գին սահմանող մասնակիցներին: «Թերթ.am»-ի հարցմանն ի պատասխան, Նախարարությունից հայտնել են, որ Ընկերությունը միաժամանակ հաղթել է երկու մրցույթում՝ Երևան-Գավառ-Երևան չվերթը՝ համար 303 երթուղով, տոմսի արժեքը՝ 500 (հինգ հարյուր) դրամ և Գավառ-Երևան-Գավառ չվերթը՝ համար 326 երթուղով, տոմսի արժեքը՝ 1000 (հազար) դրամ: Նշվել է նաև, որ «500 դրամ արժեցող տոմս գնելու դեպքում ուղևորները պետք է ճանապարհ ընկնեն առավոտ կանուխ, հակառակ դեպքում տոմսը կարժենա 1000 դրամ»: Համաձայն Հրապարակման՝ մեքենաները, որոնք կատարում են ուղևորափոխադրումները, պատկանում են համար 303 երթուղուն, որի տոմսը պետք է արժենար 500 դրամ:

Հանձնաժողովը 2011 թվականի օգոստոսի 25-ի թիվ ԱՇ-2269 գրությամբ դիմել է Ընկերությանը Հանձնաժողով ներկայացնելու տեղեկատվություն Ընկերության կողմից սպասարկվող թիվ 303, 313, և 326 երթուղիների անվանումների, մեկնման ժամերի և վայրերի, մրցութային սակագների, ուղետոմսերի արժեքների, յուրաքանչյուր երթուղին սպասարկող ավտոմեքենաների քանակի և պետհամարինիշերի վերաբերյալ:

Միաժամանակ, Հանձնաժողովը 2011 թվականի օգոստոսի 25-ի թիվ ԱՇ-2270 գրությամբ դիմել է «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերությանը՝ Հանձնաժողով ներկայացնելու տեղեկատվություն Ընկերության կողմից

սպասարկվող թիվ 303, 313, և 326 երթուղիների անվանումների, մեկնման ժամերի և վայրերի, մրցութային սակագների, ուղետոմսերի արժեքների վերաբերյալ:

Ընկերությունը 2011 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԳՄ-29 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել տեղեկատվություն իր կողմից իրականացվող ուղևորափոխադրումների վերաբերյալ:

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ Երևան-Գավառ-Երևան երթուղին (թիվ 303) սպասարկում է 4 մեքենա (32-06L, 32-07L, 32-08L, 27-86L պետհամարանիշերով) և «Հյուսիսային» ավտոկայանից մեկնում է ժամը՝ 9:30-ին, 12:00-ին և 14:00-ին, իսկ Գավառից՝ ժամը՝ 12:30-ին, 15:00-ին և 16:30-ին: Թիվ 303 երթուղու ուղետոմսի մրցութային սակագինը և փաստացի արժեքը 500 դրամ է:

Երևան-գ.Սարուխան-Երևան երթուղին (համար 313), որը սպասարկում է 6 մեքենա (32-13L, 32-11L, 32-10L, 32-14L, 20-28L, 32-09L պետհամարանիշերով) և «Հյուսիսային» ավտոկայանից մեկնում է ժամը 11:00-ին, 12:30-ին, 14:00-ին, 15:30-ին և 17:00-ին, իսկ գյուղ Սարուխանից՝ ժամը՝ 7:30-ին, 9:00-ին, 14:30-ին, 15:30 և 17:00-ին: Այս երթուղու ուղետոմսի մրցութային և փաստացի արժեքն է 1000 դրամ:

Գավառ-Երևան-Գավառ երթուղին (թիվ 326) սպասարկում է 4 մեքենա (03-52L, 03-53L, 03-54L, 03-55L պետհամարանիշերով) և «Հյուսիսային» ավտոկայանից մեկնում է ժամը 10:30-ին, 13:00-ին և 16:30-ին, իսկ Գավառից՝ ժամը՝ 10:00-ին, 13:30-ին և 15:30-ին: Թիվ 326 երթուղու մրցութային և փաստացի արժեքն է 1000 դրամ:

«Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերությունը 2011 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 101/306 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել թիվ ԱՇ-2270 գրությամբ պահանջված տեղեկատվությունը, նշելով, որ Երևան-Գավառ-Երևան երթուղին (թիվ 303) շահագործվում է սկզբնակետի և վերջնակետի խախտումով՝ չներկայանալով «Հյուսիսային» և «Գավառի» ավտոկայարաններ:

Բացի այդ, «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերությունը 2011 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 101/335 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել թիվ ԱՇ-2536 գրությամբ պահանջված տեղեկատվությունը՝ նշելով, որ Ընկերության սպասարկմանը հանձնված թիվ 313 և թիվ 326 միկրոավտոուսային երթուղիները սպասարկվում են «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության կողմից, և նշված երթուղիների համար կատարվում է ուղետոմսերի վաճառք: Իսկ Ընկերության սպասարկմանը հանձնված թիվ 303 միկրոավտոբուսային երթուղին չի ներկայանում «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիսային» և «Գավառի» ավտոկայարաններ, ուստի երթուղու սպասարկում և ուղետոմսերի վաճառք նշված երթուղու համար չի կատարվում:

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը 2011 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ Ն/948-11 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել թիվ 303, 313 և 326 երթուղիների կապակցությամբ անցկացված՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Հանձնաժողովի նախագահի 2011 թվականի սեպտեմբերի 17-ի ««Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության մոտ դիտանցումներ իրականացնելու մասին» թիվ 154-Ա հրամանի հիման վրա «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության մոտ Հանձնաժողովի կողմից իրականացվել է դիտանցում (այսուհետ՝ Դիտանցում): Արդյունքում պարզվել է, որ «Հյուսիսային» ավտոկայանի տարածքից Ընկերության կողմից Երևան-Գավառ երթուղով (թիվ 303) փոխադրում չի իրականացվում, իսկ «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության ավագ երթակարգավար Արամ Մկրտչյանը հայտնել է, որ թիվ 303

երթուղին սպասարկող միկրոավտոբուսներն ընդհանրապես չեն ներկայանում «Հյուսիսային» ավտոկայան և այնտեղից չեն մեկնում:

Հանձնաժողովի նախագահի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի ««Գավառտրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մոտ դիտանցումներ իրականացնելու մասին» թիվ 160-Ա հրամանի հիման վրա դիտարկվող ապրանքային շուկաների փոխադարձ փոխարինելիությունը պարզելու նպատակով իրականացվել է Ընկերության կողմից Երևան-գյուղ Սարուխան երթուղով (թիվ 313) փոխադրումների իրականացման վերաբերյալ դիտանցում: Այդ դիտանցման արդյունքում պարզվել է, որ Ընկերությանը պատկանող 20-29L պետհամարանիշով ավտոմեքենան, ժամը 13:40-ին շարժվեց Երևան քաղաքի Ազատության պողոտայից: Կանգառ կատարեց ժամը 15:15-ին Գավառ քաղաքում և իջեցրեց ուղևորներ, որոնք վճարեցին 1000 դրամ, իսկ գյուղ Սարուխան հասավ ժամը 15:40-ին:

Ընկերությունը 2011 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ ԳՄ-30 գրությամբ Հանձնաժողովին հայտնել է, որ թիվ 313 երթուղին ըստ հայտարարված մրցութային կարգի իրականացվում էր Երևան քաղաքի Սևանի փողոցում գտնվող ենթակարգավորման կետից և ըստ կնքված պայմանագրի պետք է շարունակվեր մինչև 2013 թվականի հոկտեմբերի 6-ը, սակայն 2011 թվականի օգոստոսի 1-ից Երևանի քաղաքապետի որոշմամբ ավտոմեքենաները հանվեցին Սևանի փողոցից և տեղափոխվեցին «Հյուսիսային» ավտոկայան, որտեղ թիվ 313 երթուղուց ինչպես նախկինում, այնպես էլ այժմ, օգտվում են ինչպես Սարուխանի, այնպես էլ Գավառի բնակիչները, որի պատճառով մեքենաները կանգառ են կատարում Գավառ քաղաքում ըստ «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության «Գավառ» մասնաճյուղից իրականացվող կանոնավոր և տարանցիկ երթուղիների չվացուցակի: Սակայն ինչպես նշվեց, Դիտանցմամբ արձանագրվել է, որ «Հյուսիսային» ավտոկայանի տարածքից Ընկերության կողմից Երևան-Գավառ երթուղով (թիվ 303) ուղևորափոխադրում չի իրականացվում:

Փաստորեն, Ընկերությունը, հաղթելով Երևան-Գավառ-Երևան երթուղու (թիվ 303) կապակցությամբ անցկացված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթը, ուղետոմսի համար առաջարկելով 500 դրամ փոխադրավարձ, փաստացի չի կատարել ուղևորափոխադրումներ վերը նշված երթուղով:

Միաժամանակ, Ընկերությունը հաղթել է նաև Երևան-Սարուխան-Երևան (թիվ 313) և Գավառ-Երևան-Գավառ (թիվ 326) երթուղիների շահագործման իրավունքը, փաստացի կատարում է ուղևորափոխադրումներ՝ կիրառելով մրցույթում առաջարկված ուղետոմսի փոխադրավարձը՝ 1000 դրամ:

Այսպիսով, Ընկերությունը փաստացի չի սպասարկել Երևան-Գավառ-Երևան (թիվ 303) երթուղին և ուղևորափոխադրումներն իրականացրել է օրենսդրությանը հակասող առևտրի պայմանների անուղղակի պարտադրմամբ: Բացի այդ Ընկերությունը, Երևան-Գավառ-Երևան երթուղու (թիվ 303) կապակցությամբ անցկացված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթում առաջարկելով 500 դրամ ուղետոմսի արժեքի համար և հետագայում փաստացի չիրականացնելով ուղևորափոխադրումներ ուղետոմսի այդ արժեքով, այլ տնտեսվարող սուբյեկտների զրկել է Երևան-Գավառ-Երևան երթուղու (թիվ 303) մրցույթին ողջամիտ պայմաններով մասնակցելու և մրցույթը հաղթելու հնարավորությունից, ինչն էլ հնարավորություն է տվել Ընկերությանն ազատորեն թելադրելու իր պայմանները Երևան-Սարուխան-Երևան (թիվ 313) և Գավառ-Երևան-Գավառ (թիվ 326) երթուղիների շահագործման ընթացքում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե որպես իրացնող կամ ձեռք բերող չունի մրցակից:

Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող է համարվում Հանձնաժողովի որոշմամբ:

Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի «Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի, այդ թվում՝ շուկայական իշխանության որոշման կարգը և չափանիշները սահմանելու մասին» թիվ 194-Ն որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 3-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով տնտեսվարող սուբյեկտը մենաշնորհ դիրք ունեցող կարող է համարվել այդ դիրքի առկայության մասին վկայող՝ բացառիկ կամ փաստացի միակ լիցենզիայի հիման վրա՝ առանց սույն կարգում նշված ուսումնասիրության իրականացման կամ տեղեկատվության վերլուծության:

Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի «Ապրանքային շուկայի սահմանների որոշման կարգը հաստատելու մասին» թիվ 190-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետի համաձայն՝ համապատասխան ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանների որոշումը հիմնված է ձեռքբերողների տեսանկյունից ապրանքների փոխադարձ փոխարինելիության վրա:

Կարգի 6-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանի որոշման համար Հանձնաժողովը կարող է օգտվել պետական մարմինների, տվյալ ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունից, փորձագետների եզրակացություններից, հարցումներից, նախորդ ուսումնասիրության արդյունքներից կամ այլ անհրաժեշտ տվյալներից:

Կարգի 7-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը որոշվում է՝ հաշվի առնելով որոշակի աշխարհագրական տարածքում գնորդի համար տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների ձեռքբերման տնտեսական հնարավորությունն ու նպատակահարմարությունը:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահումը:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահում է համարվում՝

ա) իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական գների սահմանումը կամ կիրառումը կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը,

է) այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտելու (շուկա մուտք գործելը սահմանափակելու) կամ շուկայից նրան դուրս մղելու գործողությունը կամ վարքագիծը, որի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտը մուտք չի գործել շուկա կամ դուրս է մղվել շուկայից կամ կատարել է լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համար կամ որի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտը կարող էր մուտք չգործել շուկա կամ դուրս մղվել շուկայից կամ կատարել լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համար:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից սույն օրենքի խախտումների կրկնակիությունը, տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները և հանգամանքները,

տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը և (կամ) պատմությունը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գերիշխող դիրքի չարաշահումն առաջացնում է տուգանքի նշանակում հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն դրամի չափով:

Հանձնաժողովն Ընկերության մասով հաշվի է առնում, որ Ընկերության կողմից նախկինում Օրենքի խախտում կատարած չլինելու հանգամանքը, ինչպես նաև նշանակվող տուգանքի խոշոր չափի հնարավոր բացասական ազդեցությունը Ընկերության վրա:

Ելնելով վերոնշյալից և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 7-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի «ա» և «է» կետերը, 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «գ» և «թ» կետերը, 31-րդ հոդվածը, 34-րդ հոդվածը, 35-րդ հոդվածի 1-ին մասը, Հավելվածի 3-րդ կետը, Կարգի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերը՝ Հանձնաժողովը

## ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է

1. «Երևան-Գավառ և Գավառ-Երևան ուղղություններով ուղևորների կանոնավոր փոխադրումների իրականացում 500 դրամ փոխադրավարձով» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել Երևան-Գավառ-Երևան (թիվ 303) երթուղով ուղևորափոխադրման ծառայությունը, իսկ աշխարհագրական սահման՝ Երևան-Գավառ-Երևան ցամաքային երթուղին:

2. «Երևան-Գավառ և Գավառ-Երևան ուղղություններով ուղևորների կանոնավոր փոխադրումների իրականացում 1000 դրամ փոխադրավարձով» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել Գավառ-Երևան-Գավառ (թիվ 326) երթուղով և Երևան-Սարուխան-Երևան (թիվ 313) երթուղու Երևան-Գավառ-Երևան հատվածով ուղևորափոխադրման ծառայությունը, իսկ աշխարհագրական սահման՝ Երևան-Գավառ-Երևան ցամաքային երթուղին:

3. «Գավառտրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Երևան-Գավառ և Գավառ-Երևան ուղղություններով ուղևորների կանոնավոր փոխադրումների իրականացում 500 դրամ փոխադրավարձով» և «Երևան-Գավառ և Գավառ-Երևան ուղղություններով ուղևորների կանոնավոր փոխադրումների իրականացում 1000 դրամ փոխադրավարձով» ապրանքային շուկաներում համարել մենաշնորհի դիրք ունեցող:

4. «Գավառտրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Երևան-Գավառ-Երևան երթուղու (թիվ 303) կապակցությամբ անցկացված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթում ուղետոմսի փոխադրավարձի համար 500 դրամ առաջարկելը և հետագայում փաստացի ուղետոմսի այդ արժեքով ուղևորափոխադրումներ չիրականացնելը համարել մենաշնորհի դիրքի չարաշահում (այսուհետ՝ Օրենքի խախտում):

5. Օրենքի խախտման համար «Գավառտրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք՝ տասը միլիոն դրամի չափով:

6. Հանձնարարել «Գավառտրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

1) 5-օրյա ժամկետում վերացնել Օրենքի խախտումը և այդ ժամկետի ավարտից հետո՝ 7-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն Օրենքի խախտման համար հիմք հանդիսացած հանգամանքների վերացման մասին:

2) 10-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել սույն որոշմամբ սահմանված տուգանքի վճարումը հավաստող տեղեկատվություն:

7. Սույն վարչական վարույթի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Գավառտրանս» սահմանփակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

9. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՇԱԲՈՅԱՆ**